

ԱՐԳԱՄ ԱՑՎԱՋՑԱՆ

ՑՂՆԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ*

Հյուսիսային ավանդատան առաջին հարկի լուսամուտից վերև, քառանկյունի շրջանակի մեջ տեղադրված քանդակազարդ խաչքարի ներքևի մասում՝ երեք տող.

1 Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ ՑԻԾ(Ա)Տ(Ա)Կ Է
2 ԽՕՃԱՑ ՊԱՂՏՈՒ Կ(Ո)ՂԱ
3 ԿԻՑ ՆԱՆԱՅԻՆ: ԹՎ ՌՃԼԲ (1683)

Այս արձանագրության մեջ ԽՕՃԱՑ և ԿՈՂԱԿԻՑ բառերում Ա տառը գրված է մեկ գծով:

Աբսիդի խաչաձև լուսամուտի մոտ, նրա հյուսիսային կողմի քանդակազարդ փոքրիկ խաչքարի վրա՝ երեք տող.

1 Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ ՑԻԾ(Ա)ՏԱԿ Է
2 ԳՐԻԳՈՐԻ Կ(Ո)ՂԱԿԻՑ
3 ՍԱՌԱՅԻՆ: ԹՎ ՌՃԼԲ (1683)

Այս արձանագրությունում ՑԻԾ(Ա)ՏԱԿ և ՍԱՌԱՅԻՆ բառերի 2-րդ Ա-երը գրված են մեկ գծով:

Այս արձանագրությունից չորս շարք վերև, մեկ այլ փոքրիկ քանդակազարդ խաչքարի տակ՝ չորս տող (քայքայված).

1 ԽԱՉՍ ՑԻԾ(Ա)ՏԱԿ Է
2 [ԽՕՃԱՑ].....
3 .....
4 .....[ԹՎ] ՌՃԼԲ (1683)

Ա-ն գրված է մեկ գծով:

Աբսիդի լուսամուտի անմիջապես հարավային կողմում ագուցված խաչքարի վրա՝ երեք տող.

1 Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉՍ Ց(Ի)Ծ(Ա)ՏԱԿ Է
2 ԻԾԽ(Ա)ՆԻ Կ(Ո)ՂԱԿԻՑ
3 ԳԱՑԻԱՆԻՆ: (ԹՎ) ՌՃԼԲ (1683)

Արձանագրության մեջ Ա-ն գրված է մեկ գծով:

Այս արձանագրությունից երեք շարք վերև տեղադրված խաչքարի վրա՝

1 Խ(Ա)ՉՍ Ց(Ի)Ծ(Ա)ՏԱԿ Է Տ(Ե)Ր
2 ՄԱՐՏԻՐՈՍ(Ի)Ն: Եւ
3 ԿՈՂԱԿՑՈՒՆ ՄԱՐ
4 ԹԱՑԻՆ: ԹՎ ՌՃԼԲ (1683)

Արձանագրության մեջ Ա-ն գրված է մեկ գծով:

Աբսիդի լուսամուտի հարավային կողմում, եկեղեցու հարավային ավանդատան լուսամուտի մոտ ագուցված խաչքարի վրա՝

1 Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ Ց(Ի)Ծ(Ա)Տ(Ա)Կ Է
2 ԽՈՒՏԱՊ(Ա)ՇԽԻ Կ(Ո)Ղ
3 (Ա)Կ(Ի)Ց ՄԱՐԱԲ(Ի)Ն: ԹՎ ՌՃԼԲ (1683)

Արձանագրության մեջ Ա-ն գրված է մեկ գծով:

Այս արձանագրությունից քիչ ներքև, նրանից մոտ 1,1 մ դեպի հարավ, խաչքարի վրա՝

1 Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ ՑԻԾ(Ա)Տ(Ա)Կ Է
2 [ԽՕՃԱՑ ՊԱՂ]ՏՈՒ ԿՈ
3 [ՂԱԿԻՑ Ն]ԱՆ(Ա)ՑԻՆ:

Այս անթվակիր արձանագրությունն ամենայն հավանականությամբ Նանայն երկրորդ խաչքարը լինելու հանգամանքով տարեթիվը չի նշված:

Եկեղեցու արևմտյան ճակատում՝ լուսա-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի № 9-ից:

մուտների բարձրության ուղղությամբ, մուտքի հյուսիսային և հարավային կողմերում տեղադրված են չորս արձանագիր խաչքարեր (յուրաքանչյուր կողմում երկու հատ), որոնցից երկուսի արձանագրությունները մաշված են: Հյուսիսային կողմում ագուցված վերևի խաչքարի վրա՝

1 ԽԱՉՍ Յ(Ի)Շ(Ա)ՏԱԿ Է
2 Ղ(Ա)Զ(Ա)ՐԻ ԴՈՒՍՏՐ
3 ՇՈՒՇԱՆԻՆ: ԹՎ ՌՃԼԲ (1683)

Մուտքի հարավային կողմում ագուցված վերևի խաչքարի վրա՝

1 Խ(Ա)ՉՍ ՅԻՇԱՏ(Ա)Կ Է
2 ԱՆԱՅԽԱԹՈՒ
3 ՆԻՆ: ԹՎ ՌՃԼԲ (1683)

Ինչպես վերևի, այնպես էլ այս արձանագրության մեջ Ա-ն քանդակված է մեկ գծով:

1683 թ. վերաբերվող երկու արձանագիր խաչքարեր էլ տեղադրված են հյուսիսային ճակատի միջին լուսամուտի աջ և ձախ կողմերում: Այդ խաչքարերից արևմտյան կողմինի վրա քանդակված է՝

1 Խ(Ա)ՉՍ Յ(Ի)Շ(Ա)ՏԱԿ Է
2 ԿՈՍՏԱՆԴԻՆԻՆ

Ս. Աստվածածնի հարավային ճակատում, զանգակատան առաջին հարկի ծածկի ուղղությամբ, տեղադրված են 4 խաչքար, որոնց արձանագրությունների մի մասը քայքայված է: Զանգակատնից 3—3,5 մ դեպի արևմուտք, որմում ագուցված մի մարմարիոն գեղաքանդակ խաչքարի քանդակազարդ շրջանակի տակ՝ երեք տող, մանր տառերով.

1 ՅԻՇ(Ա)Տ(Ա)Կ Է Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ ԱՆԹՐԵԻԻ ՈՐԴԻ:
2 ՄՈՒՐԱՏԻՆ: ԵՒ ԿՈՂ(Ա)ԿՑ(Ի)Ն: ՍՕԼԹԱՆԱ
3 [Զ]ԻՆ. ԹՎԻՆ: Ռ:Ճ:Բ (1653)

Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցին ժամանակին առնված է եղել պարսպի մեջ, ուր դեռևս 19-րդ դարի վերջերին կանգուն էին «մի և երկյարկանի շինութիւններ, ուր երբեմն զետեղուած էր ծխական դպրոցը»[22]: Այժմ այդ շինությունների ավերակ հետքերն են տեսանելի միայն: Ս. Աստվածածնի պարսպից ներս, եկեղեցու արևմտյան, հյուսիսային և արևելյան կողմերում, տարածված է վանքի գերեզմանատունը, որն այժմյան վիճակով ունի 16—20-րդ դարերի ավելի քան 200 տապանաքարեր: Արևմտյան մուտքի առջև գտնվող տապանաքարերից մեկի վրա՝

1 ՏԱՊԱՆՍ ԱՅՍ Է ԻՈՀԱՆԻՍԻ ՈՐԴԻ ԴԱՒԻԹԻ
2 ԻՆ [ԹՎ] ՌՃՀԳ (1724)

Ցղնայի կենտրոնական թաղամասերից մեկում, գետակի ձախ կողմում, «Կարմունջ» հրապարակի մոտ, բարձրադիր վայրում, գտնվում է Ցղնայի ս. Սարգիս անվանվող



Նկար 8

եկեղեցին, որը 1960 թ. հետո վերակառուցվել և այժմ վեր է ածվել գյուղի ակումբի: Ս. Սարգիս եկեղեցու այժմյան որմերում ագուցված արձանագիր խաչքարերն ապացուցում են, որ այս եկեղեցու նախկին շինությունը հիմնված է եղել 13—14-րդ դարերում, որը, հավանաբար, ձեռագրական աղբյուրներում հիշատակվող ս. Նշան կամ ս. Գևորգ եկեղեցին է:

Ս. Սարգիս եկեղեցին կառուցված է տեղական որձաքարից, սրբատաշ բազալտից և կարմիր քարերից: Կազմված է աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից, որի փայտե կազմությամբ ծածկը նստած է եղել

[22] Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 83:

դահլիճի փայտյա սյուների վրա: Եկեղեցին ունի երկու մուտքեր՝ արևմտյան և հյուսիսային ճակատներում, որոնցից արևմտյանն ունի քառանկյունի բացվածք:

Պատմական աղբյուրներում այս եկեղեցու հիմնման և նորոգումների մասին տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի է միայն, որ մի շարք նորոգումների ենթարկված այս եկեղեցին, ըստ նրա հյուսիսային մուտքի բարավորի արձանագրության, 1890 թ. վերանորոգվել է Ցղնայի ժողովրդի աջակցությամբ և Սաղաթել Սաղաթելյանցի

Նկար 9

վերակացությամբ: Սույն արձանագրությունը, ինչպես նաև ս. Սարգիսի որմերում ագուցված այլ արձանագրությունները, թվով տասը, հրատարակել է Ե. Լալայանը, որոնք 15—17-րդ դարերի վիմագրություններ են[23]: Ստորև զետեղում ենք ս. Սարգիս եկեղեցու չհրատարակված և թերի ընդօրինակված 4 արձանագրությունները:

Եկեղեցու արևմտյան մուտքի հյուսիսային կողմում տեղադրված խաչքարի ներքևի հարթեցված մասում քանդակված է հինգ տող արձանագրություն, որի տողերը վնասված են.

1 ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ (Է) ԹՎ ՌԿ:(1611)
2 ՏԵՐՍԻՇ: ՄԱՐԹ
3 ԱՑ: ՍԱԼԹԱՆՄԱԼԻՔ:
4 ԳՈԿԻ: .Ք.Ց: ԽՈՆ
5 ..... ՋՐՈՒ:

Արձանագրության մեջ Ա-ն գրված է մեկ գծով:

Եկեղեցու արևմտյան մուտքի հարավային կողմում ագուցված չորս խորաններով խաչքարի (նկ. 8) տակ երեք տող՝

1 ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ԱՌԱՔԵ
2 ԼԻՆ ԽՈՍ(Ր)ՈՎԻՆ: ԹՎ
3 ՌԽԵ (1591)

Այս արձանագրությունը Ե. Լալայանը հրատարակել է՝ «Սբ խաչս յիշատակ... ՌԽԵ»:

Եկեղեցու հարավային ճակատի երկրորդ լուսամուտի բարձրության ուղղությամբ, լուսամուտի աջ կողմում տեղադրված քանդակազարդ խաչքարի (նկ. 9) տակ՝ 5 տող.

1 Խ(Ա)ՉՍ ՅԻՇԱՏԱԿ:
2 [Է] ՄԱՄՊՈՐԻԲԱ: ՅՈՑՆԱՆՆԱ: ՅՈՀ
3 (Ա)ՆԷՍԱ: ԽԻԴԻՐՇԱՀԱ: ՈՐԴԻՆ ԱՆԱ
4 ԽԻԴԻՐԱ: Բ: ԽԱԹՈՆԱ: ՂԱԴԽՄԱ:
5 ՈՍՇՈՑ Լ ՈՍԿԻ: ԹՎ ՋԻԶ: (1477)[24]

Այս արձանագրության մեջ Ա-ն գրված է մեկ գծով, բացառությամբ ՅԻՇԱՏԱԿ բառի 1-ին Ա-ից:

Այս լուսամուտի ձախ կողմում տեղադրված խաչքարի խաչի տակ հարթեցված մասում՝ երեք տող (նկ. 10).

1 Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ Յ(Ի)Շ(Ա)ՏԱ(Կ) ՍԻՍԻՄԱԻՐԱ: ԲՈՒ
2 ՐԹԷԼԱ: ԱՆԱԽԱԹՈՒՆԱ: ԱՋՆԱԻ
3 ՈՐԱ: ԲԱՀԱԴՐԱ: ՀԱՅՐԱՊԵՏԱ:

Այս խաչքարի խաչի վերևի մասի աջ և ձախ կողմերում քանդակման տարեթիվը քանդակված է արձանագրության տառերից տարբերվող տառերով՝

ԹՎ ՊՋԹ. (1440)

Այս արձանագրության մեջ հիշատակվող անձնանունները Սյունյաց Բուրթելյան տոհմին են վերաբերվում և հետաքրքրական են:

Ս. Սարգիս եկեղեցու մոտ 19-րդ դարի վերջերին ս. Աստվածածին եկեղեցու երեցփոխանի և մի քանի անձերի կողմից Ցղնայի վաղեմի եկեղեցիներից մեկի ավերակների վրա «ձեռնարկել են մի այլ եկեղեց-

[23] Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 83—84:

[24] Այս արձանագրությունը, որոշ տարընթերցումով և 4-րդ ու 5-րդ տողերի պակասությամբ, տպագրել է Ե. Լալայանը (նշվ. աշխ., էջ 84):

ւոյ շինութեան էլ յայտարարելով հոգ. իշխանութեան, որ իբր թէ մի ուխտատեղի է եղած և ուզում են նորոգել... Արդէն շինութեան ձեռնարկել են ու առանց օծման հիմքը դրել և երկու արշնաչափից աւելի պատերն բարձրացրել, սա գտնւում է գիւղի հարաւային կողմը եղած եկեղեցւոյ համարեա մօտը»[25]: Այս եկեղեցին հավանաբար հետագայում չի կառուցվել, որովհետև այժմ նրա ավերակներն են տեսանելի:

Ս. Սարգիս եկեղեցուց մոտ 350 մ դեպի հյուսիս-արևելք, Տամբրի թաղամասում, լեռնալանջի փեշին գտնվում է Ցղնայի վաղեմի գերեզմանատունը: Այժմ գերեզմանատան տարածքի մեծ մասում կառուցել են մի քանի շինություններ, որի պատճառով տապանաքարերի մեծ մասն արդեն անհետ կորել են, օգտագործվել որպես շինանյութ: 1978 թ. մեր ուսումնասիրությունների ժամանակ 12—17-րդ դարերին վերաբերվող այդ գերեզմանատան դեռևս տեղում գտնվող մոտ երկու տասնյակից ավելի տապանաքարերի թվում արձանագրել ենք միայն մեկ վիմագիր տապանաքար, որի մի մասը ևս ջարդված է՝

1 ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԻ...
2 ԿՈՂԱԿԻՑ ՎԱՌՎԱՌԻՆ ԹՎ.
3 ՌՃԽԴ (1695)

Ցղնայից մոտ 3—4 կմ ներքև, հարավարևմուտք, փոքրիկ ձորակի ձախ կողմում, բարձրադիր վայրում, տեղադրված է եղել Գողթնի վաղեմի գյուղերից մեկը՝ Մցգուն, Մզկուն գյուղը: Մցգուն գյուղը կամ Միզկունց Դաշտը Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի արձանագրության մեջ նշված է Մսկն ձևով[26]: Այս գյուղի մասին պատմական աղբյուրներում շատ սակավ տեղեկություններ են պահպանվել: Դեռևս 18-րդ դարի կեսերից հետո լքված այդ գյուղն ավերակների վերածվելով խիստ քայքայվել է, որի հետևանքով այժմ վաղեմի գյուղի ավերակների հետքերն են տեսանելի միայն:

Մցգուն գյուղատեղի մեր տեղազննությունը ցույց է տալիս, որ այն ունեցել է միջին մեծություն, ուր կարող էր բնակվել մինչև 160 տուն բնակչություն: Գյուղատեղի և նրա գերեզմանատան մնացած տապանաքարերը և այլ հնագիտական տվյալները վկայում են, որ Մցգունը միջնադարում ապրել է բուռն կյանքով: Այդ գյուղատեղում դեռևս կանգուն է 17-րդ դարի և հետագայի պատմական աղբյուրներում հիշատակվող նրա ս. Ստեփանոս վանքի եկեղեցին: Վերջինս, որն իր օժանդակ շինություններով առնված է եղել պարսպի մեջ, տեղադրված է վաղեմի գյուղի բարձրադիր թաղամասերից մեկում և իր դիրքով իշխող շինություն է հանդիսացել:

Գողթնեցի Թ. Վանանդեցի եպիսկոպոսի հաղորդած տվյալներից իմանում ենք, որ այս վանքը ժամանակին մեծ համբավ է ունեցել, ուր հաճախակի մեծ խմբերով այցելում էին ուխտավորներ.

«Ի Գողթ գաւառըն ցանկալի,
Յեկեղեցին Ստեփանոսի,
Որ մականուն Մցգուն կոչի»[27]:

Ս. Ստեփանոսի համբավի մասին է խոսում նաև Զ. Ագուլեցու հաղորդած տեղեկությունը այն մասին, որ «Մայիսի ԺԹ ումն (1664 թ.—Ա. Ա.) ես Զաքարիայ այսօր համբարձում Մցգուն արարի, վերայ ուխտ էինք գնացել ջումիաթով»[28]: 18-րդ դարում, իր ճամփորդության ժամանակ, այս վանքն է այցելել նաև Ա. Կրետացին. «...չուեցի անտի (Ագուլիսից—Ա. Ա.) և եկի ի Ցղնայ Միզկունց վանքն...»[29]: Մ. Սրմ-

Նկար 10

[25] Մ. Փափազյան, նշվ. աղրոմ:

[26] Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 82:

[27] Հ. Դ. Ալիշան, Սիսական, էջ 343:

[28] Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Եր., 1938, էջ 63:

[29] «Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից», Վաղ-պատ, 1870, էջ 77:

բատյանն այս վանքին անվանել է Մեծ Գունդ վանք[30]:

Այսպիսով, պարզվում է, որ Մցգունի վանքը ս. Ստեփանոս անվանումից բացի հաճախակի անվանակոչվել է մականվամբ՝ Մցգուն կամ Մսկուն գյուղի անունով: Այժմ Մցգունի ս. Ստեփանոս վանքի համալիրից միակ կանգուն հուշարձանը նրա եկեղեցին է: Վերջինս արևելք-արևմուտք առանցքով, ուղղանկյուն հատակագծով հուշարձան է, որը բաղկացած է աբսիդից, զույգ ավանդատներից և դահլիճից: Եկեղեցու միակ մուտքը բացված է հյուսիսային ճակատում: Շինության լուսավորվածությունն իրականացված է ուղղանկյունի բացվածքներ ունեցող լուսամուտներով: Եկեղեցու այժմյան ծածկն իրականացված է փայտածածկ եղանակով:

Մցգունի ս. Ստեփանոս եկեղեցին կառուցված է տեղական գորշագույն քարերով և կրաշաղախով: Իր տեսքով հասարակ ու անհրապույր կառույց է: Եկեղեցու հիմնաշարի ուսումնասիրությունն ապացուցում է, որ նրա նախկին շինությունը կառուցված է եղել բազալտից և տեղական սրբատաշ քարերից: Ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային միակ մուտքի բարավորին քանդակված է նրա վերանորոգման արձանագրությունը՝ հինգ տողով.

1 Ս(ՈՒՐ)Բ ՍՏԷՓԱՆՆՈՍ ՎԱՆՔՍ ՆՈՐՈԳՈՒԵՑԱՒ
2 ՑՂՆԱՑԻ ԺՈՂՈՎՐԴԻԱՆ ՆՈՒԷՐՈՎ
3 ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՄԲ ԳՐԻԳՈՐ ՄՈՎՍԻՍ
4 ԵԱՆՑԻ ԵՒ. ՀԱՅՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆ-ԵԱՆՑԻ
5 Ի 1895 ԱՄԻ

Այս վերանորոգման ժամանակ էլ եկեղեցու ներքին մասը սվաղվել և ինքնուս նկարչի կողմից ծաղկազարդվել է: Այս կամ նախորդ վերանորոգումների ժամանակ եկեղեցու հյուսիսային ճակատում, մուտքի, լուսամուտների շուրջն ագուցված են նախկին եկեղեցու, նրա համալիրի և գյուղի գերեզմանատան 13—17-րդ դարերի ինը խաչքարեր, որոնցից յոթն ունեն մաշված և քայքայված արձանագրություններ:

Ամփոփելով պետք է նշենք, որ Ցղնայի հուշարձաններն ամբողջացնում են ճարտարապետական կոթողներով հարուստ Գողթն գավառի համալիրների պատմությունը և կարևոր են միջնադարյան հայկական ճարտարապետության առանձնահատկությունների ուսումնասիրման գործում:

[30] **Մեսրոպ արքեպ. Սմբատյան,** Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակու և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 491: